

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու, ՀՊՄՀ, ՍՎԴ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԸ ԵՒ ՅԱՅ ԳԱՂՈՍԿԱՆՆԵՐԻ ՉՈԳԵՒՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՑՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝

Ուաջին աշխարհամարտի տարիներին երիտթուրքական կառավարության իրագործած զանգվածային տեղահանություններից եւ կոտորածներից, ինչպես նաեւ Կովկասյան բազմաճակատում ռուսական բանակի մի շարք նահանջներից հետո ողջ մնացած արեւմտահայերի մի մասը սփռվեց աշխարհի տարբեր երկրներում, Ռուսական կայսրության բազմաթիվ շրջաններում՝ այդ թվում նաեւ Կովկասում: Կրելով մարդկային եւ նյութական մեծ կորուստներ՝ արեւմտահայությունը կանգնեց իսպառ ոչնչացման վտանգի առջեւ, ինչն էլ իր հերթին լուրջ դժվարություններ ստեղծեց հայ ժողովրդի այդ հատվածի հոգեւոր-մշակութային արժեքների պահպանման առումով: Հաշվի առնելով այդ կարեւոր հանգամանքը՝ Գարեգին վրդ. Հովսեփյանն իր նամակներից մեկում նշում էր, որ «...մեր համար թանկ են ոչ միայն մեր փախստականների կեանքը, այլեւ նրանց հոգեւոր ստեղծագործությունները, որ վերահաս կորստեան եւ ոչնչացման վտանգին ենթարկուած.... որ անգնահատելի արժէք ունեն գիտական եւ ազգային-կուլտուրական տեսակետներով: Մեր պարտքն է եւ այս անփոխարինելի կորստեան մասին մտածել, եւ գործադրել բոլոր հնարաւոր միջոցները՝ փրկելու կորստից այս թանկարժէք նիւթերը»²:

Պատերազմի տարիներին Ս. Էջմիածնի կաթողիկոսարանը ձեռնամուխ եղավ արեւմտահայերի բազմադարյան եւ հարուստ մշակույթի նմուշները կորստից փրկելու գործին: Արեւմտահայ գաղթականների շրջանում, հնագիտական-ազգագրական տարբեր բնույթի ուսումնասիրություններ կատարելու նպատակով, 1915 թ. դեկտեմբերի 20-ին տեղի

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության հանձնախմբի (կոմիտե) տրամադրած նյութական աջակցությամբ՝ 18T-6A295 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

² ՄՄ, ֆ. 1, «Կաթողիկոսական դիվան», գ. 20, թղթ. թ. 238, գ. 301 գ (դ):

ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի խառը՝ մանկավարժական ժողովից ընտրված Ազգագրական հանձնաժողովի առաջին նիստը, որին մասնակցում էին Գարեգին վրդ. Հովսեփյանը, Լեւոն Գյանջեցյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, Գրիգոր Ղափանցյանը, Արշակ Տեր-Հովսեփյանը եւ Աշոտ Հովհաննիսյանը: Հանձնաժողովի աշխատանքներին (խորհրդակցական ձայնով) ներկա էին նաեւ Երվանդ Լալայանը, Վարդգես Սուրենյանցը եւ Լեւոն Հազարապետյանը³:

Նստաշրջանից անմիջապես հետո Ազգագրական հանձնաժողովը ձեռնամուխ եղավ հոգեւոր-մշակութային համապատասխան աշխատանքների իրականացմանը, որն անցկացվեց երեք հիմնական ուղղությամբ՝ 1. մարդաբանական, որը նախատեսում էր՝ ա. Արեւմտյան Հայաստանի տարբեր գավառների գաղթականների համապատասխան լուսանկարների ստեղծում եւ հավաքագրում, բ. արեւմտահայ գաղթականների գանգի եւ մարմնի այլ մասերի մարդաբանական չափումների անցկացում, գ. գիպսից կամ մոմից մարդաբանական կադապարների պատրաստում, 2. գաղթականների պահպանած՝ ազգագրական եւ հնագիտական արժեք ներկայացնող իրերի գնում եւ հավաքագրում, որը ներառում էր՝ ա. գավառական տարագների, կանանց ու տղամարդկանց զարդերի, տնային կահ-կարասիների, արվեստի եւ այլ իրերի, գործիքների պատրաստի լուսանկարներ եւ յուզանկարներ, բ. ըստ պատմական գավառների, տարիքային բոլոր խմբերի ու սեռերի՝ տոնական եւ առօրյա գործածության զգեստներ, մազերի, գլխի, կրծքի, թեւի, ոտքի զարդեր, գ. կարասիներ, ժողովրդական արվեստագործության նյութեր, արտադրական կամ երաժշտական գործիքներ, զենքեր եւ այլն, դ. հնություններ, ձեռագրեր, դրամներ, տնային կամ եկեղեցական գործածության համար պատրաստված հին անոթներ եւ այլն, 3. ժողովրդի խոսակցական լեզվի, բանահյուսության եւ կենցաղի ուսումնասիրում, այն է՝ ա. բարբառների վերաբերյալ նյութերի հավաքում եւ ուսումնասիրում, բ. հեքիաթների, վեպերի, զրույցների, սիրո, կենցաղային եւ ծիսական երգերի, տեղի կամ դեպքի հետ կապված ավանդությունների, հանելուկների, առածների եւ առակների գրառում, գ. արեւմտահայ ժողովրդական երաժշտության նմուշների հավաքում, ժողովրդական վեպի երգելու եղանակների, սիրերգի, ծիսերգի, պարերգի,

³ Տէս ՄՄ, ֆ. 1, «Կաթողիկոսական դիվան», գ. 20, թղթ. թ. 238, գ. 261, թ. 112:

ողբերի եւ պանդխտական ու աշխատանքային երգերի պահպանում, դ. ազգային սովորույթների, ընտանեկան բարքերի (ծնունդ, հարսանիք, մահ), հավատի, հավատալիքների, նախապաշարմունքների եւ այլնի նկարագրում, ե. ժողովրդական իրավունքի, տնտեսության, արհեստագործության (տնայնագործական արդյունաբերության) եղանակների ուսումնասիրում⁴:

Առաջնորդվելով նստաշրջանի վերոհիշյալ որոշումներով՝ Ազգագրական հանձնաժողովը ձեռնամուխ եղավ արեւմտահայ գաղթականների պահպանած հնագիտական եւ ազգագրական արժեքների փրկության գործին: Ուսումնասիրություններ անցկացնելու եւ ժողովածուներ կազմելու համար հանձնաժողովը որոշեց շրջանառության մեջ դնել իր տրամադրության տակ եղած դրամական միջոցները՝ ազգագրական երեք գլխավոր բաժիններից յուրաքանչյուրին հատկացնելով երեք հազարական ռուբլի⁵: Գործին մեծ ծավալ հաղորդելու, ինչպես նաեւ ավելի բանիմաց ուժեր ներգրավելու նպատակով՝ հանձնաժողովը ցանկալի համարեց աշխատակցության եւ աջակցության համար հրավիրել հայ գիտության ու արվեստի երախտավորների՝ Աշխարհաբեկ Քալանթարին, Հովսեփ Օրբելուն, Հրաչյա Աճառյանին եւ Սպիրիդոն Մելիքյանին:

Այս ամենից հետո հանձնաժողովը քննարկեց ծրագրված աշխատանքն իր անդամների միջեւ բաժանելու հարցը: Գ. վրդ. Հովսեփյանին եւ Ս. Տեր-Հակոբյանին հանձնարարվեց էջմիածնի գաղթականների շրջանում զգեստների, իրերի ու հնությունների հավաքման եւ նկարների պատրաստման գործը: Լեզվի եւ բարբառների ուսումնասիրման աշխատանքներն ստանձնեցին Լ. Գյանչեցյանը եւ Գր. Ղափանցյանը, երաժշտության ուսումնասիրումը՝ Ա. Տեր-Հովսեփյանը, տարազի եւ գունավոր նկարների պատրաստումը՝ Գ. վրդ. Հովսեփյանը, Վ. Սուրենյանցը, Ս. Տեր-Հակոբյանը եւ Ե. Լալայանը, տնտեսության վերաբերյալ նյութերի պատրաստումը՝ Ա. Հովհաննիսյանը, բանահյուսությանը՝ Ե. Լալայանը, Լ. Գյանչեցյանը եւ Գր. Ղափանցյանը⁶:

Մասնակիցների անվանական ցանկը վկայում էր, որ հայրենանվեր այդ գործի կազմակերպմանն իրենց պատրաստակամությունն էին

⁴ Տե՛ս ՄՄ, ֆ. 1, «Կաթողիկոսական դիվան», ց. 20, թղթ. թ. 238, գ. 261, թ. 112–113:

⁵ Տե՛ս ՄՄ, «Կաթողիկոսական դիվան», ց. 20, թղթ. թ. 238, գ. 261, թ. 118, նաեւ գ. 801. Զարեհի անվան գրականության եւ արվեստի թանգարանի արխիվ, ֆ. 14, ձ. Առաքելյան, գ. 1030:

⁶ Տե՛ս ՄՄ, ֆ. 1, «Կաթողիկոսական դիվան», ց. 20, թղթ. թ. 238, գ. 261, թ. 113:

հայտնել ժամանակի գրեթե բոլոր նշանավոր հայ մտավորականները՝ ինչպես գիտություն, այնպես եւ արվեստի բնագավառում:

Ընդհանրապես Առաջին աշխարհամարտի տարիներին ականերեւ էր հայ մտավորականության տագնապը հայ բազմադարյան մշակույթի տարբեր ոլորտների գեղարվեստական նմուշների կորստյան սպառնալիքի առնչությամբ: Այդ առումով հատկանշական էին երկրի տարբեր անկյուններից Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե. Սուրենյանցին (1911–1930 թթ.) հասցեագրված նամակները, որոնց հեղինակները՝ հայ մտավորականության ներկայացուցիչները, մտահոգություն էին հայտնում մշակութային արժեքների ոչնչացման վերաբերյալ՝ միաժամանակ առաջարկելով իրենց օգնությունը: Այսպես՝ Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության վարչությունն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված 1916 թ. ապրիլի 30-ի թիվ 8 գրության մեջ նշում էր, որ «...վարչությունս քաջ գիտակցելով բոլորի լռությունը, անկարող է լուրջեան մատնել հայ գեղարուեստի ամենամուսուրակն ճիշտ՝ երաժշտության վերացումը: Ամենաժեշտ է գեթ նրա բեկորները գրի առնել եւ վերականգնել ապագայի հայ քաղաքակրթության համար: Ընկերությունը, ունենալով երգ հաւաքելու եւ գրի առնելու բոլոր տեխնիկական յարմարությունները, որդիական խոր ակնածությամբ իր յոյսը ապաւինում է Ձեզ՝ որեւէ նիւթական աշակցություն ցոյց տալ այդ խնդրի իրականացման համար»⁷:

Նկատի առնելով հայ ազգային երգերի ու երաժշտական բեկորների իսպառ կորստի մատնվելու սպառնալիքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե.-ն Թիֆլիսի հայոց երաժշտական վարչությանը տրամադրեց 1000 ռ.⁸:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ արեւմտահայերին բաժին հասած աղետը կարող էր ոչնչացնել հայ ժողովրդի մտավոր ու հոգեւոր դարավոր ստեղծագործությունները՝ Հայոց ազգագրական ընկերության խորհուրդը կազմեց մտավորականների մի արշավախումբ, որը չորս ամիս շարունակ շրջելով Անդրկովկասի գաղթավայրերում՝ բավականաչափ նյութեր հավաքեց (շուրջ 17 000 թերթ) հայ բանահյուսության, ազգագրության, բարբառագիտության, ինչպես նաեւ արեւմտահայ կոտորածների եւ գաղթի պատմության վերաբերյալ՝ ընդ որում համապատասխանաբար վարձատրելով փաստեր, վկայություններ ու

⁷ ՏճԱ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1080, թ. 1:

⁸ ՏճԱ անդ, թ. 2:

տեղեկություններ ներկայացնողներին: Հայոց ազգագրական ընկերության հայանպաստ գործունեությունն իրենց նյութական օժանդակությունն էին ցուցաբերում Ռուսական կայսրության տարբեր շրջանների հայերը: 1916 թ. դեկտեմբերի 22-ին Պետական դումայի անդամ Միքայել Պապաջանյանը Պետրոգրադից ուղարկած իր հեռագրում տեղեկացնում էր, որ Պետական խորհրդի նախկին անդամ Պավել Ղուկասյանը, Ազգագրական հանձնաժողովի գործունեությանը մեծ ծավալ հաղորդելու նպատակով, որպես նվիրատվություն, տրամադրել էր 1000 ռ.⁹: Պ. Ղուկասյանը դեռևս 1915 թ. դեկտեմբերի 24-ին 10 000 ռ. էր հատկացրել՝ Գ. վրդ. Հովսեփյանի նախաձեռնությամբ Ս. էջմիածնում ազգագրական թանգարան բացելու նպատակով¹⁰:

Հաշվի առնելով կատարվող աշխատանքների հրատապությունը՝ Ազգագրական հանձնաժողովի 1917 թ. հունվարի 17-ին կայացած հերթական նիստը որոշեց ազգագրական ժողովածուի ստեղծման համար աշխատակցության հրավիրել հայ մշակույթի այլ գործիչների եւս, այդ թվում՝ Թ. Թորամանյանին, Ե. Տեր-Մինասյանին, Բ. Իշխանյանին, Կ. Կոստանյանին, Ս. Տիգրանյանին, Հ. Մանանդյանին, Լ. Մսերյանին, Խ. Սամվելյանին, պրոֆ. Մ. Նիկոլեւսկուն, Ա. Չոպանյանին, Գ. Տեր-Մկրտչանին եւ ուրիշների¹¹:

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում նաեւ գաղթականների կրոնական պահանջմունքների բավարարմանը: 1915 թ. նոյեմբերի 4-ի տվյալներով, Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի անմիջական նախաձեռնությամբ, Կովկասյան ամբողջ երկրամասում հոգեւոր գործունեություն էր ծավալել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արեւմտահայ 95 քահանա¹²: Եթե յուրաքանչյուր կաթոլիկ հոգեւորականի բաժին էր ընկնում 10 000 գաղթական՝ ամսական 150 ռ. աշխատավարձով, ապա 2000 հայ գաղթականի հոգեւոր սպասավորությունն իրականացնում էր 1 հոգեւորական՝ ամսական 50 ռ. աշխատավարձով¹³:

1915 թ. աշնանը Պետրոգրադում Ռուսաստանի ներքին գործերի նախարարության, Գաղթականական հանձնաժողովի եւ Պետական խորհրդի անդամ սենատոր Կոնի նախագահությամբ գործող հատուկ

⁹ Տէս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1080, թ. 1:

¹⁰ Տէս ՄՄ, ֆ. 1, «Կաթողիկոսական դիվան», ց. 20, թղթ. թ. 288, գ. 326ա:

¹¹ Տէս անդ, գ. 201, թ. 119—120:

¹² Տէս ՀԱԱ, ֆ. 50, գ. 1, գ. 102, թ. 8:

¹³ Տէս անդ:

ենթահանձնախմբի ընդունած հրահանգների համաձայն՝ Ներքին գործերի նախարարությունը միջոցներ ձեռնարկեց կաթոլիկ եւ բողոքական գաղթականների կրոնական կարիքները հոգալու ուղղությամբ: 1915 թ. դեկտեմբերին նշյալ ենթահանձնախմբում քննարկվեցին նաեւ հայ գաղթականների հոգեւոր խնդիրները եւ հաշվի առնելով արեւմտահայ հոգեւորականների փոքրամիւլ լինելը՝ որոշվեց արեւմտահայերի կրոնական պահանջմունքների բավարարման գործը հանձնարարել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արեւելահայ հատվածի հոգեւոր սպասավորներին¹⁴:

Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ մեծապես վնասվում են Վանի նահանգի վանքերի եւ եկեղեցիների թանկարժեք անոթները, սպասքը, իրերն ու ձեռագրերը, իսկ մի մասը թալանվում կամ ոչնչացվում է: Հայոց հայրապետի կարգադրությամբ որոշվում է արժեքավոր իրերն ու ձեռագրերը փոխադրել Ս. Էջմիածին: Նրա կարգադրությամբ հնագիտական հետազոտությունների եւ որոնումների ժամանակ Եկեղեցու ներկայացուցիչ է նշանակվում Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանը: Նախատեսվում է հնագիտական գտնված իրերը, եկեղեցական-հնագիտական արժեք ունեցող սպասքն ու զարդերը ցուցակագրել, կնքել ու ապահովել հսկողությամբ, իրերի ցուցակի հետ տեղափոխել Ս. Էջմիածին եւ ոչ թե Թիֆլիս¹⁵: Ամենայն Հայոց Կաթողիկոսի անմիջական ջանքերով միայն անխուսափելի կորստից փրկվեց եւ Վանից Կովկաս փոխադրվեց երկու տասնյակից ավելի սեպագիր արձանագրություն:

Վասպուրականի ձեռագիր հուշարձանները եւս ոչնչացումից փրկվեցին Գեւորգ Ե. Սուրենյանցի նախաձեռնությամբ: Նրան այդ հարցում մեծապես օժանդակում էր Լիմ անապատի վերջին վանահայր Հ. վրդ. Հյուսյանը, որն իր գործունեության արդյունքներն ամփոփել է աշխատության մեջ¹⁶:

Վանի շրջանի հնությունները պահպանելու եւ կորստից փրկելու գործում հետաքրքրություն է ցուցաբերում նաեւ Պետերբուրգի գիտությունների կայսերական ակադեմիան, որի հանձնարարությամբ եւ Կովկասի փոխարքայի հրամանով Կովկասյան (Թիֆլիսի) թանգարանի

¹⁴ Տէս ՀԱԱ, ֆ. 50, ց. 1, գ. 102, թ. 1:

¹⁵ Տէս «Արարատ» ամսագիր, 1915, ԺԱ.—ԺԲ. (նոյեմբեր—դեկտեմբեր), էջ 861—862:

¹⁶ Տէս ՄՄ, «Անտիպ ձեռագրապատկերների ֆոնդ», թ. 92. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4002, թ. 1—17:

հնագիտական բաժնի ավագ թանգարանապահ ու վերահսկիչ Սմբատ Տեր-Ավետիսյանը (Ավետիքյան)¹⁷ 1915 թ. ապրիլին Պետրոգրադից գործուղվում է Կովկասյան ճակատ՝ մշակույթի հուշարձանները հաշվառելու համար¹⁸։ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.-ն հանձնարարում է Ս. Տեր-Ավետիսյանին Վանում պատմական-մշակութային հիշատակարանների վիճակը ստուգել, դրանց պահպանման համար միջոցներ ձեռք առնել, հավաքել եւ այդ ամենը հատուկ արկղերով Ս. Էջմիածին տեղափոխել¹⁹։ Ս. Տեր-Ավետիսյանն այդ առնչությամբ դիմանապետին ուղղված նամակում գրում է. «Գիտությամբ նեմարանի որոշման համաձայն եւ Տ. Փոխարհայի հրամանով երկու օրից հանապարհուելու եմ Կովկասեան պատերազմաբեմը, առանձնապես Վանի շրջանը, յատուկ հրահանգ ունենալով զեկուցագիր կազմել պատմական-կուլտուրական յիշատակարանների վիճակի եւ այն մասին, թե ինչքան նոքա վնասուել են ու անհետել ներկայ պատերազմի ժամանակ, տեղնուտեղը կարգադրել նոցա պահպանութեան մասին եւ միջոցներ ձեռք առնել այդ յիշատակարանների գոյութիւնը ապահովելու համար»²⁰։

Վասպուրականը եղել է հայ ձեռագրական մշակույթի ամենախոշոր եւ հարուստ կենտրոններից մեկը։ Այստեղ էին պահվում Արեւմտյան Հայաստանի ամենակարեւոր գրչագրերը²¹։ Վասպուրականում էին գտնվում հազարավոր ձեռագրերով հարուստ մատենադարանները, որտեղ ժամանակին գրվել են ժամագրքեր, ավետարաններ, հայսմավուրքներ եւ ճաշոցներ։ Վասպուրականում ձեռագրերի ստեղծման գործում իրենց ավանդն են ներդրել բազմաթիվ գրիչներ, ծաղկողներ եւ կազմողներ, այդ թվում՝ Զաքարիան, Կարապետը, Աստվածատուրը, Ղազարը, Գրիգոր Խլաթեցին, Թուման, Մինասենց Թուման, Վարդանը, Խաչատուրը, Ստեփանոսը, Հովհաննեսը, Աստմը, Սիմեոնը եւ ուրիշներ, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրել են ձեռագրական արվեստին²²։ Վասպուրականցի

¹⁷ Տէս Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն, Երեւան, 2004, էջ 27։

¹⁸ Տէս ՇԳՅԱ ՐԲ, ֆ. 2100, օպ. 1, ժ. 648, լ. 12. նախ՝ Н. МАРРЪ, І. ОРБЕЛИ, Археологическая экспедиция 1916 года въ Ванъ, էջ 3։

¹⁹ Տէս ՀՀ ԳԱՍ-ի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 6. նախ՝ «Докладъ Х. И. Кучукъ-Іоаннессова», «Армянскій вѣстникъ», Москва, 1916 г., 6 марта, №6, էջ 21։

²⁰ «Արարատ», 1915, ԺԱ.—ԺԲ., էջ 861։

²¹ Տէս Р. РОМБАСХ, Vom Kaukasus zum Mittelmeer: Eine Bochzeits-und Studienreise durch Armenien, Leipzig und Berlin, 1903, էջ 72։

²² Տէս «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա. (1401—1450 թթ.), կազմ. Լ. Խաչիկյան, Երեւան, 1955, էջ LIX։

հայ նշանավոր գրիչներից է արճիշեցի Հովհաննես Մանկասարենցը (1418—1505 թթ.), որը 14-ից մինչև 86 տարեկանը (72 տարի) նվիրվել է հայ գրչության զարգացման գործին եւ ընդօրինակել 132 մեծ ու փոքր ձեռագիր²³:

Ձեռագրերի ընդօրինակման նշանավոր վայրեր էին Կտուցի, Լիմի, Վարագի, Մեծոփի, Մոկաց սարի Ս. Գեորգ եւ Աղթամարի վանքերը²⁴:

Հարյուրավոր գրչագրեր կային նաեւ Սալնապատի Ս. Գրիգոր, Շուշանց (Ս. Կարմրավոր), Կուռուբաշի (Ս. Խաչ), Խլու, Արգելանից, Ընծայից (Ս. Աստվածածին), Մեծոփա եւ Սքանչեւագործ վանքերում: Մեծոփում էր պահվում Հովհան Ոսպնակեր վարդապետի «Մեռելայարույց հրաշակերտ Աւետարանը», որը ԺԹ. դարավերջին, ապահովության նպատակով, Հակոբ եպս. Թովուզյանի ջանքերով տեղափոխվում է Լիմ²⁵:

Ս. Տեր-Ավետիսյանը լինում է Վանում, Բասենում եւ Էրզրումում²⁶: 1915 թ նոյեմբերի 15-ից մինչև 1916 թ. հունվարի վերջը նա ուսումնասիրում է Վանի միջնաբերդը, Վարագի, Աղթամարի, Լիմի, Կտուցի վանքերը, կատարում հուշարձանների չափագրություններ, լուսանկարներ²⁷ եւ հավաքում շուրջ 1000 հայերեն ու մի քանի տասնյակ արաբերեն եւ թուրքերեն ձեռագիր²⁸:

Հ. վրդ. Հյուսյանը գրում է, որ այդ ժամանակ նա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.-ին է հանձնում Լիմ անապատի ազգային-եկեղեցական բոլոր սրբությունները, այդ թվում՝ 17 կտոր սրբազան մատյան՝ իբրեւ գրչի գեղարվեստի գոհարներ ու հրաշալիքներ, որոնցից 7—8-ը մագաղաթյա էին²⁹:

²³ Տե՛ս «Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի», պրակ Ա., կազմ.՝ Ե. Լալայեան, Թիֆլիս, 1915, էջ 619—620. նաեւ՝ Ե. Տէր-ՄԿՐՏԻՋԵԱՆ, Գանձեր Վասպուրականի, հտ. Ա., Պոսթոն, 1967, էջ 76—78:

²⁴ Տե՛ս Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Մոկաց Սարի Ս. Գեորգ վանքի գրչության կենտրոնը XIV—XV դարերում, ԲՄ, 1962, թ. 6, էջ 197—217. նույն հեղինակի՝ «Լիմ անապատի գրչության կենտրոնը ԺԳ.—ԺԵ. դարերում», «Էջմիածին», 1966, Զ., էջ 48—55:

²⁵ Տե՛ս Գ. Տէր-ՎԱՐԳԱՆԵԱՆ, Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառոտ նկարագրություն, «Արեւագալ», 2004, Բ., էջ 116—118:

²⁶ Տե՛ս «Մեր անվանի դասախոսները», Երեւան, 1970, էջ 229. նաեւ՝ Ս. ԳԱՐԻԲԱՋԱՆՅԱՆ, Տմբատ Եր-Աւետիսյան, «Էփիր», Երեւան, 2003, էջ 16:

²⁷ Տե՛ս «Кавказ», Тифлис, 1916, №62:

²⁸ Տե՛ս անդ:

²⁹ Տե՛ս ՄՄ, «Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ», թ. 92, էջ 4 ա. նաեւ՝ «Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ», ց. 40, թղթ. 74բ, վավ. 77. Ս. ՔՈՒԱՆՋՅԱՆ, Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, Ե.—Զ.—Է., էջ 139. Գ. Տէր-ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 111:

1915 թ. հուլիսին՝ Վասպուրականի մեծ գաղթի ժամանակ, եկեղեցական ու թանգարանային մի շարք արժեքների հետ միասին Ս. էջմիածին է տեղափոխվում 284 (ըստ Գարեգին Ա. Կաթողիկոսի՝ 1500)³⁰ ձեռագիր, այդ թվում՝ Աղթամարից՝ 201, Վանից ու նրա շրջակայքից՝ 61, Լիմից՝ 22: Մնացյալ ձեռագրերը խնամքով պահվում են առանձին թաքստոցներում³¹:

Գեւորգ Ե. Սուրենյանցը գործի է դնում բոլոր միջոցները Վասպուրականում մշակութային մնացյալ նշխարները փրկելու ուղղությամբ: 1915 թ. հոկտեմբերի 3-ի թիվ 1689 կարգադրությամբ Հայոց հայրապետը հանձնարարում է Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանին՝ Կտուց անապատի վանահայր Ստեփան վարդապետի հետ «վերադառնալ հայրենիք եւ ժողովելով անապատների բոլոր ձեռագրերը եւ թանկարժեք հնութիւնները, կանոնաւորապէս ցուցակագրել եւ ապահով ճանապարհով բերել Ս. էջմիածին՝ այնտեղ անկորուստ պահպանելու համար»³²:

Ս. Տեր-Ավետիսյանը 1915 թ. նոյեմբերի 2-ին Հայոց կաթողիկոսին ուղղված իր նամակում առաջարկում էր. «...որպէսզի Եկեղեցու իրաւունքները՝ իբրեւ սեպհականատիրոջ, խախտուած չլինին, ես կարծում եմ՝ ցանկալի կը լինէր, որ Վան գնացած վարդապետներից մէկին Վեհափառը լիազօրէր ու նշանակէր իբրեւ ներկայացուցիչ հոգեւոր իշխանութեան, որի հետ միասին իբրեւ ցուցակագրելուց յետոյ կարելի կը լինէր ուղարկել էջմիածին կամ Թիֆլիզի առաջնորդարան, որտեղ որ ապահով կը համարէք»³³: Ընդառաջելով Ս. Տեր-Ավետիսյանի նամակին՝ Հայոց հայրապետը նրան իբրեւ հոգեւոր իշխանության ներկայացուցիչ է կցում Լիմ անապատի վերջին վանահայր Հ. վրդ. Հյուսյանին, որը հոկտեմբերից գտնվում էր Վանում: Այդ մասին Հ. վրդ. Հյուսյանը հիշում է. «...1915 թուականի հոկտեմբերին, երբ Վանն արդէն վերստին ռուսական բանակի կողմէ գրաւուած էր, Տ. Գեւորգ Ե. կաթողիկոսը կանչեց ինձ Վեհարան եւ առաջարկեց. «Հայր Յովհաննէս, կուզեմ մէկն ղրկել Վան՝

³⁰ Տէս ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ, Մատենադարանները հին հայոց մէջ, «Պայքար» (բացառիկ), Բոստոն, 1946, էջ 13:

³¹ Տէս Պատմության թանգարան, նոր պատմության բաժին, Ա-Դո, Իմ հիշողությունները, Բ. մ. 839/196 (գ), էջ 210. նաեւ՝ «Արարատ», 1915, ԺԱ.—ԺԲ., էջ 865. «Հովիտ», Թիֆլիս, 1915 թ. օգոստոսի 30, թ. 33, էջ 508:

³² ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1060, թ. 4. նաեւ՝ «Արարատ», 1915, ԺԱ.—ԺԲ., էջ 811:

³³ «Արարատ», 1915, ԺԱ.—ԺԲ., էջ 861:

Վասպուրականի ձեռագիրները հաւաքելու բերելու, եւ յարմար Ձեզ դատած եմ, Ձեզի կը վստահիմ այս գործը, որդիս, քանի որ Դուք գործնականապէս ապացուցիք Ձեր հաւատարմութիւնը Ազգ. հնութիւններու եւ սրբութիւններու հանդէպ, ինչպէս որ հաւատարմաբար եւ առանց կորստեան բերիք եւ յանձնեցիք էջմիածինին Լիմ անապատի դարաւոր եւ թանկարժէք հնութիւնները, սրբութիւնները: Ուրեմն՝ Ձեզ կը վստահեմ եւ Ձեզ կը յանձնարարեմ այս կարեւոր գործն ալ...»³⁴: Վեհափառը միաժամանակ հանձնարարում է, որ «որոնած եւ գտած հնագիտական բոլոր իրեղէնները, մեծ ու փոքր ձեռագրերը, եկեղեցական հնագիտական արժէք ունեցող սպասներն ու զարդերը մանրամասն ցուցակագրուին եւ ցուցակագրելուց յետոյ կնքուին հոգեւոր իշխանութեան ներկայացուցչի եւ Ձեր (իմա՛ Ս. Տեր-Ավետիսյան.— Ա. Հ.) կնիքներով եւ պահակների ապահով հսկողութեան տակ փոխադրուին ուղղակի Ս. էջմիածին եւ Տփլիս»³⁵:

Հ. վրդ. Հյուսյանը 1915 թ. նոյեմբերի 10-ին Հայոց հայրապետին ուղղված իր գրութեան մեջ տեղեկացնում էր Վասպուրականի հնութիւնների անհուսալի վիճակի մասին. «Եկեղեցւոյ եւ ամբողջ սենեկաց դռները խորտակուած, ձեռագիրներու ընտիր մասը վերցուած է, կը մնան ճառընտիր-յայսմաւորքներ եւ մաս մը անարժէք ձեռագրեր: Ժողովուրդէն կը տեղեկանանք, որ անապատներն այս տխուր վիճակին հասցնող առաջին անգամ եղած են... որոնք մեր կղզիէն հեռանալէն զկնի, նաւով ներս կը մտնեն եւ եկեղեցւոյն ու սենեկաց դռները խորտակելով՝ շատ մը բաներ կը վերցնեն»³⁶: Այնուհետեւ հայտնում էր, որ Վարազա վանքի ձեռագրերը պատահաբար փրկվել են:

Հայոց կաթողիկոսը, տեղեկանալով այդ մասին, նույն թվականի նոյեմբերի 21-ի կոնդակով Լիմ անապատի վանահայր Հովհաննէս վարդապետին հրահանգում է «մնացորդ ձեռագիրների ամբողջական ցուցակը ուղարկել Նորին Վեհափառութեան, ապա՝ յափշտակութիւնից ազատուած անխտիր բոլոր ձեռագիրները եւ միւս եկեղեցական հնութիւններն ապահով կերպով փոխադրել Ս. էջմիածին յանուն Դիւանիս»³⁷: Միաժամանակ հանձնարարվում է տեղեկութիւններ հավաքել, թե «ուր են տարուած աւարած ձեռագիրներն ու հնութիւնները... եւ ճշտել

³⁴ Գ. Տէր-ՎԱՐԴԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 111:

³⁵ «Արարատ», 1915, ԺԱ.—ԺԲ., էջ 860—862:

³⁶ Անդ, էջ 863:

³⁷ «Արարատ», էջմիածին, 1915, ԺԱ.—ԺԲ., էջ 865:

հնախոյզի անուն ազգանունը»։ Դժբախտաբար, մեզ հայտնի չէ, թե ովքեր են եղել հափշտակողներն ու «հնախոյզը», քանի որ չի պահպանվել Հ. վրդ. Հյուսյանի վերոհիշյալ գրությունների բնագիրը։ Միայն հայտնի է, որ Մայր Աթոռի դիվանապետ Բաբգեն վարդապետը կարծում է, որ պատմական թանկարժեք հիշատակությունների եւ հնությունների ոչնչացումն իրականացվել է «բարեկամ կարծեցեալ անարժան մարդկանց ձեռքով»³⁸։

Մինչեւ 1915 թ. դեկտեմբերը (երկու ամսվա ընթացքում) Հ. վրդ. Հյուսյանին հաջողվում է հավաքել 1410 կտոր գրչագիր մատյան. դրանցից 400-ը՝ Լիմ անապատից, 360-ը՝ Վարագա վանքից, 300-ը (320. տե՛ս նույն հոդվ., էջ 114)՝ Կտուց անապատից, 350-ը՝ Վանի եւ Այգեստանի Ս. Նշան, Ս. Ծիրանավոր, Ս. Սահակ, Ս. Վարդան, Ս. Պողոս, Ս. Աստվածածին, Հայկավանքի, Հանկույսների եւ Նորաշենի եկեղեցիներից³⁹։

Այդ ձեռագրերը, ինչպես նաեւ Վանի նոր նահանգապետ Ա. Տերմենի մոտ պահվող՝ Վանի Ս. Նշան եկեղեցու մի քանի ձեռագրեր եւս հանձնվում են Հ. վրդ. Հյուսյանին, վերջինս դրանք, նույն Ա. Տերմենի օժանդակությամբ, փոխադրում է Վան։

Այս բոլոր 87 ձեռագրերը (67-ը՝ հայերեն, 20-ը՝ օտարալեզու) զետեղելով առանձին արկղերի մեջ՝ Հ. վրդ. Հյուսյանն անձամբ 1916 թ. հունվարի 7-ին Զուլֆայի վրայով տանում է Ս. Էջմիածին⁴⁰ եւ կաթողիկոսական դիվանի թիվ 200 գրություններ անմիջապես հանձնում Մայր Աթոռի մատենադարանապետ Հուսիկ արք. Մովսիսյանին⁴¹։

Ս. Տեր-Ավետիսյանը եւ Հ. վրդ. Հյուսյանը, տեղական ուժերի օգնությամբ, կարճ ժամանակում Վանի վանքերից ու եկեղեցիներից փրկեցին եւ Ս. Էջմիածնի մատենադարանին հանձնեցին 1082 մեծ ու փոքր ձեռագիր. Աղթամարից՝ 84, Վանից՝ 173, Կտուցից՝ 187, Լիմից՝ 281, Վարագից՝ 357։ Այդ է փաստում հենց ինքը՝ Ս. Տեր-Ավետիսյանը⁴²։ Սույն 1082 ձեռագրի ստացման վերաբերյալ կաթողիկոսական դիվանի 1916 թ. մարտի 23-ի թիվ 681, 682, 683, 684 գրություններով տեղեկություն է հայտնվում Աղթամարի միաբան Դանիել վրդ. Զադոյանին, Կտուց անապատի

³⁸ Անդ։

³⁹ Տե՛ս Գ. Տէր-ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 111–112։

⁴⁰ Տե՛ս «Արարատ», 1916, Դ., էջ 344։

⁴¹ Տե՛ս «Արարատ», 1916, Ա.–Բ., էջ 26. նաեւ՝ Գ. Տէր-ՎԱՐԳԱՆԵԱՆ, նշ. աշխ., էջ 112։

⁴² Տե՛ս ՀՀ ԳԱԱ-ի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 1205, թ. 17. նաեւ՝ «Գեղարուեստ», 1917, թ. 6, էջ 268։

վանահայր Ստեփան վարդապետին եւ Լիմ անապատի վանահայր Հովհաննես վրդ. Հյուսյանին⁴³։

Վերոնշյալները 1915 թ. հուլիսյան գաղթի ժամանակ բերված 284 ձեռագրի հետ կազմում են 1366 ձեռագիր (բնագրում ձեռագրերի ընդհանուր թիվը սխալմամբ նշված է 1326)։ դրանցից 285-ը՝ Աղթամարից, 234-ը՝ Վանից, 303-ը՝ Լիմից, 187-ը՝ Կտուցից, 357-ը՝ Վարագից⁴⁴։

1916 թ. մայիսին, երբ Հ. վրդ. Հյուսյանը կաթողիկոսի կարգադրությամբ, որպես հոգեւոր հովիվ, կրկին Վան էր վերադարձել, Ս. Էջմիածին է ուղարկում եւս 660 ձեռագիր, որոնցից 400-ը՝ կապիտան Գ. Չանկալյանի, իսկ 260-ը՝ Խժիշկ գյուղի բնակիչ Սահակ Գարագոշյանի միջոցով։ Հ. վրդ. Հյուսյանը նշում է, որ Գ. Չանկալյանը Ամերիկա վերադառնալուց առաջ պիտի գնար Ս. Էջմիածին եւ ներկայանար Գեւորգ Ե. կաթողիկոսին։ Ըստ Հ. վրդ. Հյուսյանի՝ Գ. Չանկալյանին հանձնված ձեռագրերն անկորուստ բերվել ու հանձնվել են կաթողիկոսին⁴⁵։

Այսպիսով՝ Վասպուրականից Ս. Էջմիածին տեղափոխված ձեռագրերի ընդհանուր թիվը հասնում է 2070-ի⁴⁶։

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի տարիներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ղեկավարութայմբ եւ անմիջական մասնակցութայմբ իրականացվեցին կազմակերպչական մի շարք ձեռնարկումներ, որոնք իսկական երաշխիք դարձան արեւմտահայ գաղթականների մշակութային ժառանգության փրկութայմ գործում։

РЕЗЮМЕ

Армянский народ перетерпел во время Первой мировой войны значительные потери (как человеческие, так и материальные), оказался под угрозой физического уничтожения, что в свою очередь создало огромные трудности для сохранения духовных и культурных ценностей народа.

⁴³ Տէս «Արարատ», 1916, Դ., էջ 195։

⁴⁴ Տէս «Արարատ», 1916, Ա.-Բ., էջ 46–47։ Ըստ Ն. Ազգունու տվյալների՝ 355-ը՝ Վարագից, 29-ը՝ Ս. Նշան եկեղեցուց, 47-ը՝ Ս. Սահակից, 20-ը՝ Ծիրանավորից, 31-ը՝ Ս. Պողոս-Պետրոսից, 42-ը՝ Ս. Վարդանից. տէս «Հովիտ», Թիֆլիս, 1916 թ. փետրվարի 21, թ. 7, էջ 109։

⁴⁵ Տէս «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հտ. Ա., էջ 98։

⁴⁶ Տէս ՄՄ, «Անտիպ ձեռագրացուցականի ֆոնդ», թ. 18, էջ 6ա։

Под непосредственным руководством Католикосата Эчмиадзина были проведены многочисленные мероприятия, ставшие основой для сохранения многовекового и богатого культурного наследия западноармянских переселенцев, в том числе их рукописных памятников. Особое внимание было уделено также духовному окормлению мигрантов.

S U M M A R Y

During the First World War, the Armenians of the West, facing great human and material losses, faced the danger of complete physical extermination, which in turn created serious difficulties in saving the spiritual and cultural values of the Armenian people.

Under the direct leadership and participation of the Catholicosate of Holy Etchmiadzin, several organizational initiatives were carried out, which served as a guarantee for the preservation of the centuries-old and rich cultural heritage of Western Armenian migrants, including handwritten monuments. Special attention was also paid to the religious needs of migrants.

